

աճիւն: Դաստիարակութիւն խոթէ իր մէջ՝ շաբաթ մը վերջը Պոմպէ եւ Յերթիւլանում: Իր մէջի շարժող կրակը ամէն ինչ կը լափէ, կը կործանէ: Անշէջ հուր է. աս ալ բան մըն է... բան մը չեղած տեղը:

Ատրաշէկ Մողոթ մըն է: Ով որ կ'ուզէ գոհաբերել իր աղջիկը՝ թող զայնը նետէ Մողոթին բազուկներուն մէջ:

*

Գոնիացիս, երբ օղեսեղանի մը առջեւ բազմած է, ինք առանձին, կրնայ ձեզի պարգեւել դասախօսական եւ գեղարուեստական հանդեսի մը ամբողջ յայտագիրը՝ զայն գործադրելով ծայրէ ծայր: Նախ կ'ընէ բացման խօսքը... փակելով ամէնուն բերանը: Յետոյ կը սկսի բանախօսութեան՝ ճառելով անբանախօսութեան մասին, մերթ ընդ մերթ ալ համեմելով իր պերճախօսութիւնը, բացատրութիւններ տալով օղիին բարերար դերին համար, ազգութեան եւ կրօնքի մէջ: Անմիջապէս վերջը կ'անցնի գեղարուեստական բաժնին՝ երգելով «մանի» մը կամ «մեմօ»: Կ'արտասանէ Նամըք Քեմալի անտիպ քերթուածներէն մին ու իսկոյն ոտքի կ'ելլէ՝ թրթռալու համար պորտախաղի մը մէջ: Այդ երանեալ պահերուն Գոնիացիին զլուխը ներս մտած է Մուհամմետի արքայութենէն ու կը ծփայ ու կը թաւալի հուրիներու ալեկոծութեան մէջ: Երբեմն ալ իրեն այնպէս կը թուի, թէ ոտքերը վերն են ու զլուխը վարն է: Եթէ բան մը կայ, որ իր տեղը մնացած է, ան ալ իր որկորն է: Իր ոտնամբարձ վիճակին մէջ կը թելածէ իբրեւ տարաշխարհիկ թռչուն: Այս ապրումներէն վերջ յաճախ գեղարուեստական բաժինը կը լրանայ կատակերգութիւնով մը, որուն վարագոյրը չիջներ, որովհետեւ ան վախճան չունի: Կատակերգութեան հերոսը ինքն է. միւս դերակատարներն են իր կինը, իր զաւակները, իր հարսերն ու փեսաները: Կատակերգութեան նիւթը կռիւ մըն է, կռիւին բովանդակութիւնը հայիոյութիւն է, ու հայիոյութեան իմաստը անհուն է՝ տարածուելով մինչեւ հարիւրերորդ պորտ:

Պէտք է ըսել, սակայն, որ Գոնիացիին սեղանը բաց է. օղիին շիշը աւելի բաց է, իսկ իր բերանը շատ աւելի բաց է: Հիւր մը այդքան բաց տեղերէ ներս մտնելով՝ կը գտնէ ինքզինքը անդունդի մը մէջ:

*